Արմավիրի մարզի Զարթոնք
համայնքի ղեկավարի
2018 թվականի հաշվետվություն

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2018թ. ընթացքում բանավոր և գրավոր համայնքապետարան է դիմել համայնքի թվով 515 բնակիչ, որից 51 -ը գրավոր: Դիմումատուների հարցերին տրվել է սպառիչ պատասխան: Ընտանեկան նպաստի համակարգում կատարվել է 19 ընտանիքների ընդգրկման փաստագրման աշխատանքներ, ստացվել և առաքվել է թվով 567 շրջաբերական: Համայնքապետարանը նոտարական գրասենյակում , Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում 48 անգամ միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Կայացել է համայնքի ավագանու 6 հերթական և 5 արտահերթ նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Համայնքապետի կողմից կայացվել է 59 որոշում և արձակաց 23 կարգադրություն, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքում կազմակերպվել է ամանորի հանդես և միջոցառում, մարտի 8-ի, հաղթանակի օրվա՝ մայիսի 9, սեպտեմբերի 21-ի ,,ՀՀ անկախության օրվա,, միջոցառումներ, որին մասնակից են եղել համայնքի բնակիչները: Ազգաբնակչությանը տրվել է տարբեր բնույթի 486 տեղեկանք:

Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով 3739,0 հազ. դրամ, հողի հարկի մասով 4661,4 հազ. դրամ, տեղական տուրքերի մասով 160,0 հազ. դրամ և վարձակալական հողի մասով 935,3 դրամ: Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի, սոց.վճարների և եկամտահարկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի: Սեփական եկամուտների գծով հավաքագրվել է 87,8%: Պետ բյուջեից համայնքին հատկացվել է 45602,1 հազ.դրամ դոտացիա:

Պաշտպանության բնագավառում

Համայնքապետարանը տարածքային զինկոմիսարյատից ձմեռային և ամառային զինակոչերի համար ստացած ծանուցագրերը ժամանակին բաժանվել է հասցեատերերին և հետևել է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարյատ: Զին ծառայությունից խուսափողների թիվը հասցվել է զրոյի, ինչպես նաև աշխատանքներ է տարվում նախկինում զինծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարյատ ներկայացնելու գործում: Վարվում է զինապարտների գրանցամատյան:

Աջակցություն և ուշադրություն կենտրոնում են պահվում թրկությունը և աշխատանքային վետերանների սոցիալական խնդիրների լուծումը:

Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Ժամկետային ծառայության մեկնած զին.ծառայողներին ցուցաբերվել է ֆինանսական օգնություն:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղղությամբ: Մասնագետների մասնակցությամբ տրվում է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում: Մարզային ԳԱՍԿ-ի մասնագետների օգնությամբ: Բազմիցս ԳԱՍԿ-ի մասնագետները հրավիրել են համայնք, հողօգտագործողների հետ տարվել են պրակտիկ աշխատանքներ: Համայնքում իրականացվում է կաթիլային ոռոգման համակարգը, որը ավելի արդյունավետ է ավանդական ոռոգումից: Համայնք է ներկրվում ՀՀ կառավարության կողմից մատչելի գներով հատկացվող պարարտանյութեր:

Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահեռացում, որի համար կնքվել է աշխատանքային պայմանագիր մեխանիզատորի հետ: Խիստ հսկողություն է սահմանվել համայնքապետի կողմից խմելաջրի խողովակաշարի վրա կատարված վթարների և նրանց վերացնելու ուղղությամբ: Գնվել և տեղադրվել է մեկ կենտրոնախույս պոմպ 350000 դրամ արժողությամբ: Համայնքի բյուջեի գումարներով համայնքում փոխվել է համայնքի վթարային խմելաջրի ջրագիծը պոլիէթիլենային խողովակներով, կատարելով 980,0 հազ.դրամ ներդրում: Համայնքում նախկինում պլանավորված 2-րդ և 3-րդ փողոցներում /կայարանի հատվածում/ կատարվել է գազաֆիկացում համայնքի բյուջեով, որը կազմել է նախագծա նախահաշվային աշխատանքները ներառյալ 5653,0 հազ.դրամ:

Տրանսպորտի բնագավառում

Համայնքապետարանի կողմից կատարվել է գյուղամիջյան ճանապարհների մասնակի ավազապատման և հարթեցման աշխատանքներ: Աշխատանքներ են տարվում այլ հատվածի վերանորոգման աշխատանքները կատարելու համար: Համայնքի փողոցներում կատարվում է փոսալցման աշխատանքներ: Աշխատանքներ են տարվում համայնք մտնող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ուղղությամբ, կատարվել է նախագծա նախահաշվային աշխատանքներ, որի վերաբերյալ հարց է բարձրացվել ՀՀ վարչապետի մակարդակով: ՀՀ վարչապետին հղված երկու գրություններին տրվել է պատասխան, որ 2019 թվականին գյուղ մտնող ճանապարհը ընդգրկված է ծրագրում: Ասֆալտապատման նախագծա-նախահաշվային աշխատանքների համար համայնքի բյուջեից վճարվել է 900,0 հազ.դրամ: Կատարվել է Զարթոնք-Եղեգնուտ միջհամայնքային ճանապարհի խճապատման և հարթեցման աշխատանքներ, որի ընդհանուր գումարը կազմում է 1918,0 հազ.դրամ:

Առևտրի և սպասարկման բնագավառում

Արգելվել է փողոցային առևտուրը, որի համար համայնքապետի որոշմամբ զգուշացվել է մեկ մարդ: Հետագայուն նման խախտում թույլ չտալու պայմանով:
Հսկողություն է սահմանվել արագ փչացող, ժամկետանց սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:
Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:
Միջոցներ են ձեռնարկվում համայնքի բնակիչների արտադրած գյուղ մթերքի իրացման հարցում, որ վերջնական լուծում չի ստացել:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքում ծնելիությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանու որոշմամբ ամեն մի նորածին՝ երեխայի ընտանիքներին տրվել է յուրաքանչյուրին՝ 20,0 հազար դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է_ 220,0 հազար դրամ՝ /թվով 11 երեխայի/: Համայնքից բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվածներին թվով 15 ուսանողներին որպես ուսման վարձ է տրվել 1490,0 հազ.դրամ: Սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերվել է 1840,0 հազ. դրամ ֆինանսական օգնություն: Ֆինանսական օգնություն է տրվել համայնքի բռնցքամարտի խմբին: Զարթոնքի միջնակարգ դպրոցին հատկացվել է 1150,0 հազ.դրամ դրամաշնորհ: Համայնքապետարանը ,,Վերջին զանգ,,-ի միջոցառման ժամանակ շրջանավարտներին հանձնում է ՀՀ քաղաքացու անձնագրեր, իսկ Սեպտեմբերի 1-ին ,,Գիտելիքի օր,,-վա կապակցությամբ դպրոցի առաջին դասարանցիներին նվիրում է գրենական պիտույքներ: Համայնքի բնակչի մահվան դեպքում համայնքապետարանի կողմից տրամադրվում է մեկական ծաղկեպսակ: Ինչպես նաև սոցիալապես ծանր վիճակում գտնվող մեկ ընտանիքում կատարվել է հողարկավորման արարողություն՝ ֆինանսական աջակցությունը կատարվել է համայնքապետարանի կողմից: Համայնքում պլանավորվում է բացել նախակրթարան երկու խմբի համար, որի գումարի 25%-ը համայնքապետարանը վերցրել է իր վրա:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ անձնակազմը. գլխավորությամբ Ն.Գևորգյանի և համայնքապետարանի աշխատակազմի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարակների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում բացատրական աշխատանքներ: Համայնքում հրավիրվում են բժիշկ մասնագետներ ազգաբնակչությանը անվճար ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով:

Համայնքապետարանը պայմանագիր է կնքել սանիպիտ կայանի հետ խմելաջրի վճարովի ախտորոշման համար, որի համար հատկացվել է 100,0 հազար դրամ:

Գյուղատնտեսության բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում անասնագլխաքանակի հաշվառման ամենամյա աշխատանքներ:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել հունիսյան ցանքաշրջանառության - բերքատվության ինչպես նաև առկա գյուղտեխնիկայի հաշվետվություններ:

Համայնքում համաձայն գրաֆիկի պետ պատվերի շրջանակներում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ: Համայնքում նախատեսվում է կառուցել նոր կիսախողովակաշար, 730 մետր երկարությամբ որի 10% հատկացնում է համայնքը. որը վերջնականապես կլուծի համայնքում դժվար հասանելի հողակտորների ոռոգման ջրի հարցերը: Նախատեսվում է համայնքի տարածքում կատարել հին դրենաժների մաքրման աշխատանքներ, որը կնպաստի կրկնակի աղակալումից փրկել տասնյակ հեկտար վարելահողեր:

Համայնքի առկա հիմնախնդիրները

1. Համայնք մտնող ճանապարհի ասֆալտապատում 7,5 կմ
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
3. Կուլտուրայի տան հիմնովի վերանորոգում:
4. Գյուղամիջյան փողոցի ասֆալտապատում 3 կմ
5. Աղակալված հողերի աղազերծում 150 հա
6. Նոր խորքային հորերի հորատում 5 հատ
7. Ոռոգման ջրի ապահովում, հին խորքային հորերի վերականգնում 5 հատ

Մասնակցությամբ Արմավիրի մարզպետարանի ,,ՏԻՄ,, վարչության գլխավոր մասնագետ Գայանե Սուքիասյանի:

Զարթոնքի համայնքապետ՝ Պ.Սարգսյան

31.01.2019թ.